ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/312

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Յունիքոմփ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ

Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 02.12.2021թ.),

Հ. Բաբուրյանին (լիազորագիր՝ տրված 10.12.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.11.2021թ. թիվ 26/26-1/19461-2021 գրությամբ «Յունիքոմփ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 22.11.2021թ. թիվ 1/5426-2021 գրության հիման վրա, 29.11.2021թ. թիվ 26/26-1/19461-2021 գրությամբ նախաձեռնել է «Յունիքոմփ» ՓԲԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Յունիքոմփ» ՓԲԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 10.12.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Յունիքոմփ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/15 ծածկագրով էլ. աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Վերոհիշյալ Աճուրդի «Յունիքոմփ» ՓԲԸ-ի մասնակցության հայտը ստորագրել է ՓԲԸ-ի աշխատակից Մ.Սնխչյանը և հայտին կցվել է ՓԲԸ-ի տնօրեն Ա.Բալդրյանի կողմից Մ.Սնխչյանին տրված լիազորագիրը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.11.2021թ. տեղի ունեցած հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության (կցվում է) համաձայն՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.2-ում շտկել 1-ին բաժնի 1.2 մասում հայտարարագիրը ներկայացնող անձի տվյալները, 1.3.3 կետը, 4-րդ բաժնի 4.1.5, 4.3.2, 4.3.3, 4.4.2 և 4.4.3 կետերը և վերջին էջում բացակայում է էլ. ստորագրությունը, ինչպես նաև 4-րդ չափաբաժնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հստակեցնել արտադրողի անվանումը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով առաջարկելով՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 16.11.2021թ.՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ին ուղղված էլեկտրոնային ծանուցմամբ (կցվում է) առաջարկել է մեկ աշխատանքային օրում կատարել համապատասխան շտկումը:

Նույն օրը, այն է՝ 16.11.2021թ.՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ն կատարում է պահանջված շտկումը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 11.11.2021թ. թիվ 73-Ա հրամանով (կցվում է) ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը 2021թ. նոյեմբերի 12-ից 30-ը ներառյալ դրվել է ՓԲԸ-ի վաճառքի բաժնի ղեկավար

Հ.Բաբուրյանի վրա, ուստի 16.11.2021թ. պատրաստված հայտի շտկված փաստաթղթերը ստորագրել է ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հ.Բաբուրյանը:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 18.11.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 9-րդ կետի համաձայն՝«Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար, մասնավորապես՝ շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերի հետ կցված չէ լիազորագիրը:

Նույն արձանագրության 10-րդ կետի համաձայն՝ 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց անբավարար և մերժվեց:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման

նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Յունիքոմփ» ՓԲԸ-ն մասնակցել է ՀՀ Ազգային ժողովի աշատակազմի կարիքների համար կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/15 ծածկագրով էլ. աճուրդին, որի հայտերը ստորագրել է ՓԲԸ-ի աշխատակից Մ.Սնխչյանը և հայտին կցվել է ՓԲԸ-ի տնօրեն Ա.Բալդրյանի կողմից Մ.Սնխչյանին տրված լիազորագիրը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.11.2021թ. տեղի ունեցած հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1.2-ում շտկել 1-ին բաժնի 1.2 մասում հայտարարագիրը ներկայացնող անձի տվյալները, 1.3.3 կետը, 4-րդ բաժնի 4.1.5, 4.3.2, 4.3.3, 4.4.2 և 4.4.3 կետերը և վերջին էջում բացակայում է էլ. ստորագրությունը, ինչպես նաև 4-րդ չափաբաժնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հստակեցնել արտադրողի անվանումը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով առաջարկելով՝ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սակայն Աճուրդի գնահատող հանձնաժողովը միայն 16.11.2021թ. «Յունիքոմփ» ՓԲԸ-ին ուղղված էլեկտրոնային ծանուցմամբ է առաջարկել մեկ աշխատանքային օրում կատարել համապատասխան շտկումը:

Նույն օրը, այն է՝ 16.11.2021թ.՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ն կատարել է պահանջված շտկումը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 11.11.2021թ. թիվ 73-Ա հրամանով ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը 2021թ. նոյեմբերի 12-

ից 30-ը ներառյալ դրվել է ՓԲԸ-ի վաճառքի բաժնի ղեկավար Հ.Բաբուրյանի վրա, ուստի 16.11.2021թ. պատրաստված հայտի շտկված փաստաթղթերը ստորագրել է ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հ.Բաբուրյանը:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 18.11.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար, մասնավորապես՝ շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերի հետ կցված չէ լիազորագիրը:

Գտնում ենք, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, որի արդյունքում առաջացած բացասական հետևանքները չեն կարող հիմք հանդիսանալ ՝«Յունիքոմփ» ՓԲԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար, մասնավորապես.

ա) Ինչպես արդեն նշել ենք, Աճուրդի գնահատող հանձնաժողովը 11.11.2021թ. տեղի ունեցած հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությամբ է արձանագրել «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում անհամապատասխանություններ: Եվ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը նույն նիստի օրը դրա մասին պետք է էլեկտրոնային եղանակով տեղեկացներ մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սակայն գնահատող հանձնաժողովը շտկման ծանուցումը ուղարկել է մասնակցին միայն նիստից հինգ օր անց՝ այն է՝ 16.11.2021թ., և համապատասխանաբար հայտը մերժվել է 18.11.2021թ.: Մինչդեռ Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը պարտավոր էր այդ մասին մասնակցին ծանուցել հենց 11.11.2021թ., ինչը տվյալ դեպքում չի կատարել: Սակայն եթե հանձնաժողովի քարտուղարը այդ մասին ծանուցեր «Յունիքոմփ» ՓԲԸ-ին հենց 11.11.2021թ., ապա տվյալ հայտը կստորագրվեր հենց ՓԲԸ-ի տնօրենի կողմից /վերջինս իր լիազորությունների կատարումը դրել է Հ.Բաբուրյանի վրա միայն 12.11.2021թ.-ից/, և համապատասխանաբար առկա չէր լինի հիմք՝ մասնակցի հայտը մերժելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,

ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարի՝ նույն նիստի օրը արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով մասնակցին տեղեկացնելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Նման պարագայում քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթը, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույն փաստական հանգամանքներում (Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի խախտման հիմքով) գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանը թիվ ՍՑ-ՆԳ-2021/298 ընթացակարգով 04.11.2021թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2021/298 որոշմամբ մերժվել է «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:

բ/ Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ ևս մեկ հանգամանք. «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է այն հիմքով, որ «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտի շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերի հետ կցված չէ լիազորագիրը, մինչդեռ շտկված փաստաթղթերը ստորագրված է եղել այն անձի կողմից

(Հ.Բաբուրյանի), ում վրա 11.11.2021թ. թիվ 73-Ա հրամանով դրվել է ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը 2021թ. նոյեմբերի 12-ից 30-ը ներառյալ: Եվ նման պարագայում տնօրենի պարտականությունները կատարող Հ.Բաբուրյանը չէր կարող ինքն իրեն տալ լիազորագիր շտկված հայտի փաստաթղթերը ստորագրելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Յունիքոմփ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/312 ընթացակարգի շրջանակներում 03.12.2021թ. ժամը 09:20-ին և 10.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը 10.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստին, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.11.2021թ. թիվ 1/5426-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Կից ներկայացնում ենք ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/15 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին դիմում-հայտարարությամբ մասնակցելու ցանկություն հայտնած «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտի մերժման վերաբերյալ հիմնավորումը՝ կից հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/312 ընթացակարգի շրջանակներում 03.12.2021թ. ժամը 09:20-ին և 10.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/312 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/312 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Յունիքոմփ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով 09.11.2021թ. ժամը 14:10-ին: Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 10.11.2021թ. ժամը 14:10-ին: Աճուրդն ամփոփվել է 10.11.2021թ. և համակարգի կողմից 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Յունիքոմփ» ՓԲԸ-ն:

3. Նույն արձանագրության 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտն արձանագրել է, որ ներկայացված հավելված 1.2-ում պետք է շտկել 1-ին բաժնի 1.2 մասում հայտարարագիրը ներկայացնող անձի տվյալները, 1.3.3 կետը, 4-րդ բաժնի 4.1.5, 4.3.2, 4.3.3, 4.4.2 և 4.4.3 կետերը և վերջին էջում բացակայում է էլ. ստորագրությունը:

Ինչպես նաև 4-րդ չափաբաժնի համակարգում մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր դաշտում հստակեցնել արտադրողի անվանումը սյունակը և «Հիշողության նվազագույն ծավալը՝ 512MB: Հոսանքի և USB մալուխները պետք է ներառված լինեն կոմպլեկտի մեջ: Օրիգինալ քարթրիջը պարտադիր ներառված պետք է լինի գործարանային կոմպլեկտի մեջ... Ապրանքը պետք է լինի չօգտագործված:» նախադասությունները:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 16.11.2021թ. որոշում է կայացվել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

6. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.11.2021թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից շտկման տրված դիմում հայտարարությունը հրավերով սահմանված կարգով չի ներկայացվել, մասնավորապես՝ շտկված դիմում հայտարարությանը լիազորագիր կցված չէ և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.11.2021թ. թիվ 26/26-1/19461-2021 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 22.11.2021թ. թիվ 1/5426-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում

հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Յունիքոմփ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով 09.11.2021թ. ժամը 14:10-ին: Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 10.11.2021թ. ժամը 14:10-ին: Աճուրդն ամփոփվել է 10.11.2021թ. և համակարգի կողմից 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Յունիքոմփ» ՓԲԸ-ն:

Նույն արձանագրության 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտն արձանագրել է, որ ներկայացված հավելված 1.2-ում պետք է շտկել 1-ին բաժնի 1.2 մասում հայտարարագիրը ներկայացնող անձի տվյալները, 1.3.3 կետը, 4-րդ բաժնի 4.1.5, 4.3.2, 4.3.3, 4.4.2 և 4.4.3 կետերը և վերջին էջում բացակայում է էլ. ստորագրությունը:

Ինչպես նաև 4-րդ չափաբաժնի համակարգում մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր դաշտում հստակեցնել արտադրողի անվանումը սյունակը և «Հիշողության նվազագույն ծավալը՝ 512MB: Հոսանքի և USB մալուխները պետք է ներառված լինեն կոմպլեկտի մեջ: Օրիգինալ քարթրիջը պարտադիր ներառված պետք է լինի գործարանային կոմպլեկտի մեջ... Ապրանքը պետք է լինի չօգտագործված:» նախադասությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 16.11.2021թ. որոշում է կայացվել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.11.2021թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից շտկման տրված դիմում հայտարարությունը հրավերով սահմանված կարգով չի ներկայացվել, մասնավորապես՝ շտկված դիմում հայտարարությանը լիազորագիր կցված չէ և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2, 8.9 և 8.11 ենթակետերի համաձայն՝

8.2 ***<u>Էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2021.11.10. 14:10-ին</u>***: Եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո:

8.9 ***<u>Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը</u> հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում***

1) ***<u>գնահատվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը</u>***.

2) մերժվում են մյուս մասնակիցների հայտերը:

Եթե աճուրդն ամփոփվելու պահին մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը, գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը յոթանասունհինգը չգերազանցելու դեպքում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումն իրականացվում է գնահատող հանձնաժողովի հրավիրված նիստժը սկսելու օրվանից հաշված տաս, իսկ գերազանցելու դեպքում՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.11 ***<u>Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում,</u>*** ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը <u>նույն օրը</u> դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը***: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը միայն 16.11.2021թ. «Յունիքոմփ» ՓԲԸ-ին ուղղված էլեկտրոնային ծանուցմամբ է առաջարկել մեկ աշխատանքային օրում կատարել համապատասխան շտկումը:

Ընկերության կողմից վկայակոչված փաստը պարզելու նպատակով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին ուղղված 10.12.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/20324-2021 գրությամբ խնդրել է սեղմ ժամկետում հայտնել ե՞րբ է Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը և տրամադրել ծանուցումն ու ծանուցման վերաբերյալ փաստաթուղթը:

Ի պատասխան նշված գրության «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն 13.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով հայտնում ենք, տեղեկացնում եմ, ***որ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/15» ծածկագրով ընթացակարգի դիմում-հայտում շտկում կատարելու մասին <u>ծանուցումը ուղարկվել է</u>***

<u>Յունիքոմփ ՓԲԸ-ին 16.11.2021թ. 16:41:33 դրությամբ</u> և ունեցել է հետևյալ բովանդակությունը՝

«Հարգելի Յունիքոմփ ՓԲԸ,

Դուք դիմել եք ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. «Յունիքոմփ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.2-ում շտկել 1-ին բաժնի 1.2 մաում հայտարարագիրը ներկայացնող անձի տվյալները, 1.3.3 կետը, 4-րդ բաժնի 4.1.5, 4.3.2, 4.3.3, 4.4.2 և 4.4.3 կետերը և վերջին էջում բացակայում է էլ. ստորագրությունը: Ինչպես նաև 4-րդ չափաբաժնի համակարգում մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր դաշտում հստակեցնել արտադրողի անվանումը սյունակը և «Հիշողության նվազագույն ծավալը՝ 512MB: Հոսանքի և USB մալուխները պետք է ներառված լինեն կոմպլեկտի մեջ: Օրիգինալ քարթրիջը պարտադիր ներառված պետք է ներառված պետք է լինի գործարանային կոմպլեկտի մեջ: Ապրանքը պետք է լինի չօգտագործված» նախադասությունները: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով»:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուի կողմից տրամադրված Ընթացակարգին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրության և գործի քննության ընթացքում պարզված փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***<u>նորմը մեկնաբանվում է</u>՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ <u>ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,</u>*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

<u>Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:</u>

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***<u>նույն օրը</u>*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահմանված է, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար էլեկտրոնային եղանակով <u>նույն օրը</u> դրա մասին մասնակցին <u>ծանուցելու իմպերատիվ պահանջ, որի</u>

չպահպանման դեպքում, կարող են անտեսվել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը և հանգեցնել սխալ մեկնաբանման:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ Ընթացակարգի հրավերով նույնպես հստակ սահմանվել է, որ ***էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 10.11.2021թ.. 14:10-ին, իսկ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում գնահատվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը, առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը***:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված

այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ գործում առկա փաստական հանգամանքների և կիրառման ենթակա իրավական նորմերի համադրման արդյունքում՝ արձանագրում եմ, որ 11.11.2021թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ հրավերով սահմանված կարգով՝ ***աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը, տվյալ դեպքում՝ 11.11.2021թ. հրավիրված գնահատող հանձնաժողովի նիստի ընթացքում գնահատվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտի գնահատման արդյունքում արձանագրվել են Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ***, մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Ընկերությանը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է ***16.11.2021թ***., այսինքն՝ Կարգի 41-րդ կետով և հրավերի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված ժամկետի և իրավական որոշակիության սկզբունքների պահպանման պահանջների խախտմամբ:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողություններից բխող բացասական հետևանքները չեն կարող հանգեցնել «Յունիքոմփ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.11.2021թ. թիվ 26/26-1/19461-2021 գրությամբ «Յունիքոմփ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**